



108. ՉԱՐՉՈՒՆ ԴԱՐԴԱ

Մին շենում մին շատ քլասիր մարթ ա ինժնմ։ Տա մին օր հանդա տոն կյալիս եշում ա, տըեսնում խոխեթը մին քարավ խաղ ըն անում։ Խովիսոցան մինն ասում ա.—Դայի, դայի, վեց ճուղուպուր տո, էս քարը քեզ տանք։ Էտ մարթին ծըեռքեն էլ տասսը ճուղուպուր ա ինում, տըհանցա ճոկում ա վեց փոշ ճուղուպուր տամ խովիսոցը, քարը յոր օնում, տանում տոն։

Էտ քարը քշերն իշեղ ար տամ։ Էտ մարթն էլ ըսկի գլուղում շար, թա տա հինչ քար ա.

Մին օր հեռու տըենդա մին շարչի յա կյամ էտ շենը, տրա տանն էտ քարը տըեսնամ ա, ասում։—Երկու հազզար մանեթ տամ, ինձ տու էտ մարթը գյուղում ա թա տա հերան անավ զարափաթ ա անում, ասում ա՝ հը՛, է՛, հը՛, հոնան էլ ծիծաղում։ Զարշին դյուղում ա, թա փողը խրեգյ ա, տրա հետե յա ծիծաղում, ասում ա.—Դե լավ, իրեք հազզար մանեթ կըտամ։ Էտ մարթը նորըմինան ա ասում հը՛, է՛, հը՛, էլլա ծիծաղում։ Զարշին էլլա յա գյուղում, թա փողը խրեգյ ա, ասում ա.—Դե լավ, հենգյ հազզարը կըտամ։ Էտ մարթն էս դոնում ծիծաղում շի, գյուղում ա, թա շարշին հերան անավ մազաղ ա անում։ Սա յէլ տըեսնում ա, վըեր խոսում շի, տուս ա օնում հենգյհազզար մանեթը տամ հերան, էտ անկյին քարը յոր օնում, տանում մին օրիշ տըեղ տասսը հազզար մընեթավ ծախում։

Զարշին կյամ ա էլլա էտ շենը, օղում ա էն մարթին զարմաց-
նե, քիինամ ա, ասում.—Թըզանա ինք կալած քարն օրիշ աբեղ
տասսը հազզար մընեթավ ըմ ծախալ Տա յէլ ասում ա.—Ի՞նձ
հինչ, ես տրան վեց փոշ ճուղուպուր ըմ տուվալ Զարշին էտ վըեր
ըսկանում ա, դաստին սըերտը ճաքում ա, մըեռնում:

